

no. 8a

ՀԱՃԱՐԻ ՍԵՐՄԵՐԻ
ՀԱՎԱՔԸ

A I
4322

1926



Ման. խմբագիր Առ Մուշեղյան

Քարգմ. Առ. Մուշեղյան

Օրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնվել է արտադրութեան 1934 թ. Մայիսի 13-ին

Մտորադրված է ապագրելու 1934 թ. Մայիսի 26-ին

Քլավիրի լիազոր № 251

Պատվեր № 345, արած 2000

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԵԱԼԱՆԳՅԱՆ 50

**ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՈՂՁ ԿԱՐՍՏՈՒ-
ԹՅՈՒՆՆ ՈՔՏԱԿՈՐՄԵՆԲ ԺՈՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ԿԱՄԱՐ**

Սոցիալիստական շինարարութեան հետագա ծավալումը, Զ-րդ հնգամյակի ժողովնտեսութեան պլանի անթերի կատարումը պահանջում է առավելագույն չափերով ոգտագործել մեր լայնածավալ յերկրի բնական հարստութեւնները: Այդ տեսակետից անտառային հարստութեւնների ոգտագործումը առաջնակարգ նշանակութեւն ունի:

Անտառային արդեւնաբերութեան առաջ Զ-րդ հնգամյակում գրված խնդիրների շարքում յերկրի փայտեղենի պահանջի լրիւ բավարարումը վճռական տեղ է գրավում: Այդ խնդիրների կատարումը հնարավոր է միայն անտառային հետամնաց տնտեսավարական ձևերի մնացորդների լիկլիզացիայի և անտառային արդեւնաբերութեան բոլոր պրոցեսների լրիւ մեխանիզացիայի հետևանքով:

Սակայն անտառային տնտեսութեան նշանակութեւնը մեր յերկրի համար միայն փայտեղենի արտադրանքով չի սահմանափակվում: Մի կողմ թողնելով անտառներից ստացվող մի շարք ժողովնտեսական խոշոր նշանակութեւն ունեցող

նյութերի (տորֆ, անասնակեր, բժշկական բույսեր, վորս և այլն) ուսումնասիրութիւնը, այս բրոշյուրում, անհրաժեշտ ենք համարում ծանոթանալ Միութեան լայնածավալ անտառների սննդի ամենաընտիր յուղեր պարունակող հսկայական քանակի վայրի պտուղներից մեկի—հաճարի ծառի սերմերի (ընկույզի) նշանակութեան և հավաքի անհրաժեշտութեան վրա:

ՄԵՐ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԱԶԱՐԱՎՈՐ ՏՈՆՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՀԱՃԱՐԻ ՅՈՒՂԵՐԸ—ՀԱՃԱՐԻ ՄԵՐՄԸ ՉՊԻՏԻ Ի ԶՈՒՐ ԿՈՐՉԻ

Հաճարի ծառի պտուղները—հաճարի սերմերը (ընկույզները) իրենց մեջ պարունակում են մեծ քանակութեամբ ճարպային մասեր, վորոնք վերամշակումից հետո տալիս են շատ ախորժեղի և վորակավոր ու սննդաբար յուղ: Հաճարի սերմերից ստացվող յուղը փոխարինում է անցյալներում արտասահմանից ներմուծվող մի շարք թանկարժեք յուղերի, որինակ նուշի և պրովանսյան յուղին:

Հաճարի ավելի ցածրորակ յուղերը կարող են ոգտագործվել տեխնիկական նպատակներով (ոճառի արդյունաբերութեան մեջ և այլն): Յեւ, վերջապես, քուսպը, վոր մնում է հաճարի սերմի վերամշակումից հետո, ոգտագործվում է հրուշակային արտադրութեան մեջ: Մնում է

թեպիք, վորը դարձյալ անողուտ չի կորչում, վորովհետև նա հրաշալի վառելանյութ է և կարող է ողտադործվել հենց նույն յուղագործարաններում:

Ահա այդպիսի հսկայական արժեք ունի մեր Սորերդային Միութեան մեջ առատորեն գոյութեւն ունեցող բազմատեսակ վայրի յուղատու պտուղներից մեկը՝ հաճարի սերմը:

Կարելի՞ յե արդոք անտարբեր վերաբերվել այն փաստին, վոր հսկայական քանակութեամբ հաճարի սերմ անողուտ փշանում է անտառներում, վորտեղ այն համարյա բոլորովին չի հավաքվում: Այդչափ անուշադիր վերաբերմունք դեպի մի այդպիսի թանկարժեք կենսամթերքի հավաքման գործը, ինչպես ընակչութեան, նույնպես և մթերող կազմակերպութեաննների կողմից՝ միանգամայն անթույլատրելի յե:

Այդպես շարունակվել չի կարող: Անհրաժեշտ է ուժեղ թափով սկսել հաճարի սերմի հավաքելն ու մթերելը մանավանդ այժմ, յերբ յերկիրը հրահայական պահանջ ունի: Հաճարի յուղերի արտադրութեան համար հսկայական բազա հանդիսացող այդ հումքն անհրաժեշտ է ողտադործել ամբողջովին և ռացիոնալ կերպով: Սորերդային Միութեան հաճարի անտառների հսկայական տարածութեանների բերքը պիտի ծառայի իր նպատակին, — պիտի մտնի յուղի արդյունաբերութեան հումույթի ֆոնդի մեջ:

ՅԱՐԵԿԱՆ ՄԵՆԲ ԿԱՐՈՂ ԵՆԲ ՌԻՆԵՆԱԼ ՀԱ- ԶԱՐԱՎՈՐ ՑՈՆՆ ՀԱՃԱՐԻ ՍԵՐՄ

Մեր հաճարի սերմի հուճքի բազան հսկայական է: Մեր յերկրում հսկայական տարածություններ ծածկված են հաճարի անտառներով: Մեր Խորհրդային Միությունը մոտ 2 միլիոն հեկտար հաճարի անտառ ունի: Յեթե հաճարի սերմերը մենք կարողանանք հավաքել հաճարի անտառների դոնե մեկ քառորդ տարածությունից և բերքի միջին քանակը, ամենավատ բերքի տարին, հեկտարից հաշվենք 7 ցենտներ, տարեկան կստանանք 350 հազար տոնն սերմ, վորը յերկրին կտա ավելի քան 90 հազար տոնն սնունդի բարձրորակ յուղ:

Հասկանալի յե, վոր հաճարի սերմերը հավաքելու և մթերելու գործի շուրջը պիտի մորբիլիզացիայի յենթարկել աշխատավոր մասսաների լայն նախաձեռնությունը:

Միայն տեղական աշխատավոր բնակչության ակտիվ մասնակցությամբ կստացվին անհրաժեշտ հետևանքներ և հաճարի սերմերի բնական հարստության հսկայական պաշարները չեն փչանա և փտի անտառներում, այլ կոգտագործվեն պետությանն անհրաժեշտ և ոգտակար գործի—յուղ արտադրելու համար:

Հիմնական շրջանները, վորտեղ հաճարի ծառն ավելի յե տարածված, դա Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասն ու Ղրիմն են:

Հյուսիսային Կովկասի հաճարի անտառների տարածութիւնը հավասար է մոտ 800 հազար հեկտարի (1927 թ. վիճակագրութեան տվյալներով):

Անդրկովկասի հաճարի անտառների տարածութիւնը մոտավորապէս 1094 հազ. հեկտար է, Վորից՝ Վրաստանում—758 հազար հեկտար, Ադրբեյջանում—238 հազար հեկտար, և Հայաստանում—93 հազար հեկտար:

Յորհրդային Հայաստանի հաճարի անտառներն ըստ շրջանների բաշխված են հետևյալ կերպ (հազար հեկտարներով).

Շամշաղինի շրջանում . . .	19,6	հազ.	հեկտ.
Իջևանի » . . .	10,3	»	»
Իջևանի » . . .	19,5	»	»
Ալլահվերդու » . . .	38,4	»	»
Ստեփանավանի » . . .	7,0	»	»
Ղարաքիլիսայի » . . .	3,2	»	»

Իժմախտարար, առայժմ դժվար է ճշտորեն ասել, թե հաճարի տարեկան միջին բերքը հեկտարից Վորջան է: Զանազան կազմակերպութիւնների կողմից կատարված հետազոտութիւնները տալիս են տարբեր թվեր, Վորոնք տատանվում են 400 կլ. մինչև 24 ցենտներ մեկ հեկտարից: Յեթե ընդունենք մեկ հեկտարից հավաքվելիք բերքի քանակը 300 կիլոգրամ և յենթադրենք, Վոր սերմեր հավաքելու համար

Հայաստանի հաճարի անտառների մոտ 50^{0/0} միայն կարելի է կլինի ընդգրկել, այսինքն՝ կլոր թվով մոտ 50 հազար հեկտար, ապա նույնիսկ ամենամեծագույն զեպքում տարեկան կարելի չէ հավաքել և մթերել 15 հազար տոնն հաճարի սերմ, վոր կտա մոտ 4 հազար տոնն բարձրորակ յուղ: Հաճարի ծառը 2—3 տարին մեկ անգամ տալիս է միջին, և 7—8 տարին մեկ անգամ — առատ բերք, հետևապես անուշադրության մասնելով հաճարի սերմերը հավաքելու, մթերելու և վերամշակելու գործը, մենք կորցնում ենք տարեկան մոտ 1600 տոնն բարձրորակ յուղ:

Իսկ 50 հազար հեկտար հաճարի անտառի մատչելի տարածության հումքի բազան ակնհայտ փաստ է:

ՀԱՃԱՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱԲԵԼԸ ՊԻՏԻ ԳՆՈՆԱ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՈՐԾ. ԼԱՏՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆԲԸ ԿՈԳՆԻ ԳՐԱՆ

Իժրախտաբար հումքի այդ հսկայական մասսան, հիմնականում, մեր կողմից դեռ չի ոգտագործվում: Հաճարի սերմեր հավաքելը դեռ մասսայական գործ չի դառել: Այն վայրերում, վորտեղ բնակչութունը դեռ մի կերպ զբաղվում է դրանով, հաճարի սերմը հավաքելը կրում է

ափելի շուտ պատահական յեկամուտի և վաչ թե սխառեմ առիկ կազմակերպված աշխատանքի բնույթի:

Մտկայն ի՞նչն և պատճառը, վոր հաճարի սերմը հավաքելու գործը դեռևս այնպես չի գրված, ինչպես պետք է:

Հիմնականում դրա պատճառն այն է, վոր տեղական բնակչությունը հաճաքի անտառների շրջաններում վաչ միայն այդ գործի շուրջը կազմակերպված չեն, այլև հաճախ բոլորովին վաչինչ չգիտի հաճարի սերմի արժեքի և ոգտադարձման մասին, հետևաբար չի գիտակցում սերմը հավաքելու անհրաժեշտությունը:

Այդ հանցանքի գզալի մասն բնկնում է հաճարի սերմ մթերող տեղական կազմակերպությունների վրա. նրանք աշխատավոր բնակչության մեջ կազմակերպչական և մանավանդ բացատրական աշխատանքները դեռևս անհրաժեշտ բարձրության վրա չեն դրել:

Մինչդեռ այդ բացատրական աշխատանքը հսկայական նշանակություն ունի: Անդրժողկոմխորհի 15/3—30 թ. վերջումը՝ խորհրդային վողջ հասարակայնությանը և առաջին հերթին կոլխոզնիկներին և անհատական սեկտորի չքավոր, միջակ մասսային հաճարի սերմի հավաքման ու մթերման աշխատանքներին ներդրավելու մասին՝ տեղերում անհրաժեշտ է լայն կերպով բացատրել:

Աշխատավոր մասսաներին պիտի բացատրել, ներկայումս ի դուր վոչնչացվող այդ արժեքավոր պտուղների հավաքման և պետութեանը հանձնելու անհրաժեշտութեանը: Աշխատավոր մասսաներին պիտի լայնորեն ծանոթացնել այն ոգնութեան ժապին, վոր նրանք հաճարի սերմի հավաքելուն և միտերելուն ցույց տված իրենց ակտիվ մասնակցութեամբ՝ կարող են հասցնել սոցիալիստական շինարարութեանը:

Վերջապես, յուրաքանչյուր աշխատավորի անհրաժեշտ և բացատրել այն տնտեսական առավելութեանների մասին, վոր նա անմիջապես կարող և ունենալ՝ պարապելով հաճարի սերմ հավաքելու և միտերելու գործով:

Հաճարի սերմը հավաքելու աշխատանքները լավ դրված կլինեն միայն այն դեպքում, յերբ տեղերում ել լավ դրված կլինեն լայն բացատրական աշխատանքները: Հավաքելու պայմանները, նրանց վճարը միտերող կազմակերպութեանների կողմից և այն արտոնութեանները, վոր տալիս և պետութեանը հաճարի սերմեր հավաքողներին, սոցալազնակչութեան մեջ պիտի լայնորեն մասսայականացվեն:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԱՌԱՋՈՒՄ Ե ԳԱՃԱՐԻ ՍԵՐՄԵՐ ԳԱՎԱԲՈՂՆԵՐԻՆ: ԳԱՎԱԲՈՂՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՃԱՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՁԻ ԱՊՐԱՆԲԱՎՈՐՈՒՄԸ

Պետութեանն ամեն կերպ խրախուսում և աջակցում և աշխատավորութեան նախաձեռնու-

Թյան՝ հաճարի սերմեր հավաքելու և մթերելու
ստադարիդուռ: Որինակ, ՄնդրԺողկոմխորհը 1930 թ.
քննելով հաճարի սերմեր հավաքելու հարցը, վո-
րոշել է՝ հաճարի սերմեր հավաքողներին և մթե-
րողներին ազատել հաճարի սերմեր հավաքելու
և մթերելու հետ կապված բոլոր տեսակի հար-
կերից:

Ֆինորգաններին առաջարկված է գյուղ-
հարկը սահմանելիս հաճարի սերմերից ստացած
յեկամուսները չհաշվառել:

Այդ վորոշումն արդեն կիրառվում է և հազիվ
թե կարիք լինի յերկար խոսել, թե ինչ լուրջ
նշանակություն ունի այդ վորոշումը հաճարի
սերմ հավաքող ընտկչության համար:

Բացի դրանից, Հայանտառարեսար, հաճարի
սերմ հավաքելն ապահովելու համար, անտառարդ-
ունտեսություններին հրահանդել է հաճարի սերմ
հավաքողներին անարգել անտառ թողնելու մասին:

Պետական որդանների միջոցառումները՝ հա-
ճարի սերմերը հավաքելը հսկայական գործ դար-
ձնելու և այդ դրադմունքը պատահականից սիս-
տեմատիկ աշխատանքի վերածելու ուղղությամբ
հսկայական չափերով կոժանդակի աշխատավո-
րության նախաձեռնության ծավալմանն այդ ուղ-
ղությամբ:

Մթերող կազմակերպությունների համար
ամենանպաստակալ խնդիրներից մեկը հավաքողների
հետ կոնտրակտացիա կնքելն է:

Հաճարի սերմեր հավաքողը յուրաքանչյուր տոննի համար, վոր հանձնում և մթերման կիտե-
րում, ստանում և 350 ռ., վորից վորոշ մասն
ստանում և մթերքներով և արդյունաբերական
ապրանքներով:

Հավաքած սերմի վճարի հաշվին ստացվելիք
ապրանքների մանրամասն ցուցակը հավաքողը
կարող և ստանալ տեղական մթերող կազմակեր-
պություններից:

Հայաստանում 1934 թ. հաճարի սերմ մթե-
րում և Հայանտառտրեստը, վորը մթերած սերմը
հանձնում և կոպչերատիվ-առևտրական և հանրա-
պետական այլ կազմակերպություններին:

Հավաքողն անհրաժեշտ ըլլեր առդեկուլթյուն-
ների և տեղում ծագած թյուրիմացությունների
դեպքում պիտի դիմի հետևյալ հասցեներով Յերե-
վան Հայանտառտրեստ, Նալբանդյան № 11, կամ
Յերևան, Ցենտրոպլոդոսվոշի Յերևանի բաժան-
մունք, Մարքսի փողոց, № 11:

ՎԱՃԱՐԻ ՍԵՐՄԸ ՎԱՎԱԲԵԼԸ ՊԻՏԻ ՄԵՔԵՆԱ- ՑԱՅՎԻ. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԻՆ ՁԵՎԵՐՆ ԱՆԿՐԱԾԵՑՑ ԱՐԴՅՈՒՆԲՆԵՐԸ ՉԵՆ ՏԱ

Մինչեվ վերջին ժամանակներս հաճարի սեր-
մեր հավաքելը կատարվում եր հետամնաց, պրի-
միտիվ ձեվերով: Բարձրանում եյին ծառերի վրա
և ճյուղերը թափահարում և կամ ձողերով պտուղ-
ները. թափ եյին տալիս և այլն: Բացի նրանից,

վոր այդ ձեվերը պահանջում են հսկայական աշխատանք և եներզվա, ցանկալի արդյունք ել չեն տալիս: Վորպեսզի համոզվենք, վոր պրիմիտիվ այդ ձեվերով զգալի հաջողության չի կարելի հասնել, բավական է միայն ասել, վոր յերբեմն հաճարի ծառի բաբձրությունը հասնում է մինչև 45 մետրի, իսկ հաստությունը՝ 1—1,5 մետրի, և Հյուսիսային Կովկասի վորձը գալիս է ամենայն ակնհայտությամբ ապացուցելու այդ մեր ասածը:

Վերջապես, վոչ մի քննադատության չի դիմանում նայել ծառերի վրայից արդեն գետին թափված սերմերի այսպես կոչված՝ «հատիկներով» հավաքելը, յերբ հավաքողն ամբողջ ուր ծնկաչոք սողում է ծառի տակ և սերմը հավաքում կողովում կամ պարկուժ: Մինչև անդամ առատ բերքի դեպքում ել հավաքողն այդ ձեվով որական կարող է հավաքել միայն 7—8 կիլոգրամ. սովորաբար միջին, հաշիով, մի հավաքողին որական ընկնում է 3 կիլոգրամ:

Պահանջելով հսկայական աշխատանքի աննպատակ վատնում, պրիմիտիվ այդ ձեվերը հավաքողին տալիս են չնչին աշխատավարձ:

ՄԵՔԵՆԱՅԱՅՐԵՔ ԿԱՎԱՐԸ ԿԱՎԱՔԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՔ ԱՐՏԵԼ-ԽՄԲԱԿՆԵՐ

Յեթե մենք ուզում ենք հաճարի սերմ հավաքելու գործը մասսայականացնել, ապա պիտի,

վերջ տանք սնայնագործական մեթոդներին: Հա-
ճարի սերմը հավաքելուն նախ և առաջ պիտի
կազմակերպված բնույթ տանք: Անհատ-հավա-
քողները փոխարեն պիտի ունենանք կազմակերպ-
ված արտել-խմբակներ: Կոլխոզնիկները, չքավոր
և միջակ մենատնտեսները, կոմյերիտականներն
ու պիսներները հաճարի սերմ հավաքելու համար
պիտի կազմակերպվեն արտել-խմբակներում և
այդ գործի վրա կենտրոնացնեն խորհրդային
վողջ հասարակայնության ուշադրությունն ու ա-
ջակցությունը: Անտառարդատնություններն այդ
արտելներին պիտի ցույց տան ամենամեծ ոգ-
նությունը: Այս դեպքում պիտի լինի աշխատանք-
ների լրիվ կոնտակտ և շաղկապումն: Անտառարդ-
ատնեսությունները պիտի ակտիվ մասնակցու-
թյուն ունենան հաճարի սերմեր հավաքող ար-
տելների աշխատանքներում:

Այդպիսի արտելները դեռ մայիսի սկզբներից
հաճարի ծառուտներում պիտի հետախուզություն
կատարեն՝ պտուղների սաղմնավորումը վորոշելու
նպատակով և հետո հետեվեն պտուղների դար-
գացմանը, հայտաբերելով բերքատու և բերքա-
ուստ շրջանները:

Միանգամայն անհրաժեշտ է, վոր այդ ժա-
մանակաշրջանում հաճարի մասսիվները բաժանվեն
առանձին շրջանների: Այդ միջոցառումը կուժե-
ղացնի հավաքելու աշխատանքների կազմակերպ-

մանք հետադայում: Իս, շրջաններին ամրացված արտեղներին հնարավորություն կտա սնտառի վոչ մի անկյունն առանց հետադառության չթողնել:

Բացի դրանից, արտել-խմբակներն իրենց արդեն ծանոթ անտառամասերում նախորոք կրմաքրին բերքատու ծառերի տակը, վորպեսզի ծառից ընկած սերմերը չխառնվեն նախորոք տարվանից մնացած տերեւների, մանր ճյուղերի, խոտի և այլ իրերի հետ: Այդ աշխատանքն առանձին եներգիւ և ժամանակ չի խլում, սակայն մեծ նշանակություն ունի, վորովհետև այդ դեպքում սերմերը թափ տալու կարիք չի լինի և կարելի յե հավաքել, յերբ նրանք իրենք ծառից կթափվեն: Թափված սերմերն այս դեպքում կարելի յե հավաքել վոչ թե ամեն սր, այլ 8—10 սրը մեկ անգամ: Այս դեպքում սակայն սնհրաժեշտ և միայն հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքը—յերկար ժամանակ գետին ընկած-մնացած սերմի խոնավությունը մեծանում և և այդ պատճառով էլ սերմի յուղատու հատկությունները պակասում են:

ՃԱՎԱՐԻ ՃԱՎԱԲՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՆՔ ՆՈՐ ՁԵՎՈՎ

Գեանից լինչպե՞ս հավաքել հաճարի սերմերը, վորպեսզի այդ աշխատանքը բավականաչափ բարձր արդյունք տա և համապատասխանորեն բարձրացնի հավաքողի աշխատավարձը: Այդ հար-

ցին սպառող պատասխանը մենք կտանք, յերբ ծանոթանանք հաճարի սերմեր հավաքելու ստորև նկարագրված ձևերի հետ:

Մենք արդեն ասացինք, վոր հաճարի սերմը ծառից պիտի վայր ընկնի նախորոք նրա տակը մաքրված տարածութեան վրա: Սերմերի մեծ մասը (80—85⁰/₀) ծառից թափվում են մոտավորապես մեկ ամսվա ընթացքում: Սերմերից հետո ծառից վայր են ընկնում տերևներն ու սերմերի տուփիկները: Վորովհետև սերմերի թափվելը շարունակվում է նաև տերևաթափի ժամանակ, ուստի սերմերի մի մասն ընկնում է տերևների վրա, հետո նորից ծածկվում տերևներով: Այսպիսով, հաճարի սերմերը ծառից թափվելուց հետո խառնվում են տերևների, սերմի տուփիկների և այլ իրերի հետ:

Յեվ, ահա, այստեղ է, վոր փոխանակ ձեռքով տերևները խառնելու, մանրակրկիտ կերպով սերմերն առանձին-առանձին հատիկներով հավաքելու զամբյուղի, դույլի կամ արկղի մեջ, մեզ ոգնութեան է զալիս, առայժմ պարզ ու հասարակ, բայց հարմար և, վոր գլխավորն է՝ ամեն պայմաններում հարմարելի միջոցը, այդ, այսպես կոչված, յերկու մողերի կիրառումն է:

Սերմ հավաքելու այս նոր ձևի յուրացումը շատ հեշտ է, դա հին ձևի, այսինքն՝ ըստ, «հատիկների» հավաքելու սկզբունքի միանգամայն

հակառակն և Յեթե հին ձևը կայանում և նրանում, վոր սերմը գատվում, հատիկ-հատիկ հավաքվում և ծառի տակը թափված տերևների, ճյուղերի և խոտերի միջից, ապա նոր ձևը կայանում և նրանում, վոր ընդհակառակը՝ միանգամից հավաքվում և ամբողջ ծառի տակի տերևները, ճյուղերի փոքր և մեծ կտորները, քարերը, հողի կտորները, ջախը և այլն:

Այդ խառնուրդից հաճարի սերմը մաքրվում-գատվում և ստորեն կարագրված յերեք գործողությունների միջոցով:


ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Այն ծառը, վորի տակից ուզում են սերմերը հավաքել, նախ փոցխով նրա տակը մաքրում են՝ ջախից, տերևներից, քարերից և առհասարակ այն բոլոր իրերից, վորոնց կարելի չե հեռացնել, աշխատելով տեղում թողնել սերմերը: Դա այնքան ել հեշտ չե, ինչպես այդ թվում և առաջին հայացքից, մանավանդ այն դեպքում, յեթե սերմերը վայր թափվելուց առաջ ծառի տակի տարածությունը նախորոք մաքրված չե անտառախոտի ծածկոցից:

Այդ դեպքում փոցխը պիտի շարժել այնպես, վոր ատամները հազիվ գետնին հասնեն: Յեթե փոցխը ամուր կպչի գետնին, ապա մաքրված տարածության վրա սերմեր քիչ կմնան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԿՆՅՆՆԵՐԻ ԿՆՅՆՆԵՐԻ

Միանգամից փոցխով շատ չպետք է հավաքել-
 դա կնշանակի, վոր ծառի տակը միանգամից մեծ
 տարածությամբ չպիտի փոցխել, այլ միայն մի
 մասը, մոտավորապես 3 մետր տրամադծով: Դա
 անհրաժեշտ է նաև նրա համար, վորպեսզի սեր-
 մերը հավաքելուց հետո հեշտ լինի հավաքած:



Նկար 1.


կույտերը ցրել, այսինքն՝ մաքրած գետինը նո-
 քից ծածկել իր նախկին ծածկոցով, վորպեսզի
 հաճարի ծառի տակի հողի խոնավությունը
 չզրկասի և ծառերը չմեռան ու չհիվանդանան:

Յեթե տերևները մի քիչ խոնավ են, ապա
 չպիտի փոցխել, վորովհետև խոնավ տերևներին
 սերմերը շատ հեշտությամբ են կաշտում ու նրանց
 հետ ել հավաքվում են:

Իսկ յեթե տերևները շատ են խոնավ, կամ
 բոլորովին թաց են, որինակ, անձրևի ժամանակ
 կամ անձրևից հետո, ուրեմն հաճարի սերմերը
 հավաքելը պիտի դադարեցնել:

Հետագայում, յերբ մի կողմի վրա յե հա-
վաքված ծառի տակի տերևները, ջախը, քարերը,
ճյուղերի կտորները և այլն, պիտի ավելել:

Ավելում և մի կողմի վրա փոքրիկ կույտե-
րով հավաքում են ծառի տակը փոցխելուց հետո
մնացած տերևները, սերմերի տուփիկները և առ-



Նկար 2.

հասարակ ամբողջ աղբը, փորի մեջ լինում են
հաճարի սերմեր: Կույտերն անապայման պիտի լի-
նեն փոքրիկ, և իրարից մոտավորապես 2—2¹/₂
մետր հեռավորութեան վրա: Իսկ յեթե կույտերը
միմյանցից հեռու լինեն, դա կնշանակի սերմե-
րը «քշել» հեռու: Այդ դեպքում մինչև կույտե-
րին հասնելը շատ սերմեր կկորչեն, փորովհետև
հաճարի անտառներում գետինը ընի ձև ունի,
նա ամբողջապես պատած է մկնաբնների յեղբի
ու մուտքի ճանապարհներով, և յերբ գետինն
ավլում ենք, նրանք ընկնում են այդ ճեղքվածք-
ները, ծածկվում հողով և մնում են այդտեղ

թագնված: Այդ յերևույթն ավելի տարածված է
այն անտառներում, վորտեղ հողի վերին շերտը
կազմված է փտած տերևներից:

Այդ գործողությունը կատարող գործիքնե-
րը—փոցխն ու ավելը պիտի շինված լինեն հետև-
յալ կերպ. փոցխը—յերկար (12—14 սմ.) ա-
տամներով, ատամների մեկը-մյուսից հեռավորու-
թյունը 6—8 սանտ.: Կարճ և խիտ ատամներ
ունեցող փոցխով փոցխելիս՝ տերևների հետ կը-
գնան նաև շատ սերմեր:

Ավելը պետք է լինի յերկու տեսակ: ԿՈՇՏ
ավել, վոր կապում են հաճարի ճյուղերից և մի
այլ ավել, վորի ծայրը կտրում են: Այդպիսի
ավելն անհրաժեշտ է փափուկ փտած տերևնե-
րով ծածկված հողերի համար, վորտեղ, ինչպես
վերը նկարագրեցինք, կան ճեղքվածքներ և մըկ-
նաբների ճանապարհներ: Յեթե այդպիսի հողերի
վրա փափուկ ավել բանեցնենք, ապա կույտերը
հավաքելիս ճեղքվածքների մեջ մեծ քանակու-
թյամբ սերմեր կընկնեն: Կոշտ ավելով այդպիսի
ճեղքվածքներից սերմերը դուրս են հանվում և
ավելվում են մինչև կույտերը: ՓՄ.ՓՈՒԿ ավելը,
վորի ծայրը չի կտրվում, գործ է ածվում
ամուր, կավային և քարերով ծածկված հո-
ղերում: Այդպիսի հողերի վրա կոշտ ավելով
կույտեր կազմելիս սերմերի հետ անխուսափելի-
որեն կհավաքվի նաև հող, քար և այլն:

Ահա այն բոլոր կարևոր կանոններն ու
ցուցումները, վորոնք անհրաժեշտ և իմանալ և
գործադրել հաճարի սերմեր հավաքելու նոր ձևի
առաջին գործողութեան ժամանակ:

ՅԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկրորդ գործողութեանը՝ հավաքած սեր-
մերը ազրից մաքրելն և: Իրա համար ոգտվում
են հատուկ այդ նպատակի համար գոյութեան
ունեցող ապարատով:

Այդ աղարատը բաղկացած և յերկու մաղերի
կամբինացիայից, կամ 2 մաղից ու 3 տախտակից
(տես զբնագրի շապկի վրայի նկարը):

Վերևի մաղի ամենահարմար չափը՝ 70×100
սմ., մյուս, տակի մաղի չափը՝ 60×100 սմ և:
Տախտակները հետեվյալ չափերի յեն՝ յերկուսը,
վոր ծառայում են մաղերի կողերի համար, յու-
րաքանչյուրն ունի 30×100 սմ.: Յերրորդ տախ-
տակը, վոր ծածկում և մաղերի ծայրերը՝ մի
կողմից յերկարութեանը 60 սմ. և և մյուս կող-
մից՝ 76 սմ.: Բարձրութեանը՝ մոտ 24 սանտ.:

Այդ տախտակները հողակապերի կամ ողե-
րի միջոցով ամրացվում են տակի մաղի յերեք
կողմերին, կամ, յեթե այդ մաղի ցանցը թեր-
թավոր յերկաթից և, ուղղակի ամրացնում են
ցանցի յեզրներին, այդպիսով, տակի մաղը կար-
ծես թե ստանում և յերեք թեվ:

Յուրաքանչյուր թեվի միջին մասում յեր-

կայնական ձևի յերեք անցքեր կան. վերին մա-
ղի շրջանակի յերեք կողմերում կան այդ ձևի
ու չափի յերեքական ականջներ և տեղափոխված
են այնպես, վոր ազատ կերպով կարողանան
անցնել տակի մաղի թևերի յերկայնական անց-
քերով. այդ ականջների վրա յեն հազցվում
տակի մաղի թևերը: Այն տեղերում, վորտեղ
թևերը միանում են միմյանց հետ՝ ամրանում
են մղլակներով (շախնգալետներով): Այսպես
կարելի յե հավաքել և սարքել մաղերը: Մաղերի
հավաքելու այդ ձևը հնարավորությունն է տալիս
սերմեր հավաքողներին տեղափոխություններ
կատարելիս, յուրաքանչյուր մաղ տեղափոխել
առանձին, իսկ այդ հարմարությունը մեծ նշա-
նակություն ունի, վորովհետև սերմ հավաքող-
ները հաճախ ստիպված են լինում գնալ բլուր-
ների զառիվայրը լանջերով և յերբեմն ել որե-
րով ճանապարհ գնալ: Այդպիսի տեղափոխու-
թյունների ժամանակ շատ հոգնեցուցիչ է հետը
վորևե իր տանելը, վորի ծանրությունը հարթ
ճանապարհներում, գուցե, զգալի չի:

Այդ մաղերի դերը կայանում է հետևյալում.
վերին մաղի ցանցի վանդակները քառակուսի
յեն և այն չափի, վոր հաճարի սերմերը կարող
են ազատ անցնել վանդակի միջից (նկար №1).
վանդակի կողերն ունեն 11 սմ. յերկարություն
և լայնություն: Ապարատը թափահարելիս հա-
ճարի սերմերն ու մանր աղբն անցնում են վե-

րին մաղի վանդակներէց, իսկ տերևները, ճյուղերի կտորները, սերմի տուփիկները և այլն չեն կարողանում անցնել վանդակներէց, մնում են մաղի վրա և հավաքվում են մաղի ազատ կողմը ու այդտեղից թափվում են դետին: Ապարատը կարելի չէ վորոշ չափով թեքել դեպի այդ կողմը, վորպէսզի աղբի այդ խոշոր մնացորդներն ավելի արագ ցած՝ թափվեն:

Տակի մաղն ունի ավելի մանր և յերկարաժուռ վանդակներ: Այդ վանդակների մեծութունը պիտի այնքան լինի, վոր սերմերը նրանց միջից չանցնեն: Վանդակների լայնութունը 6 միլլիմետր եւ Մաղն իր վրա պահում եւ միայն սերմերը և սերմերի մեծության այլ մնացորդները, իսկ մնացած ամբողջ աղբն անցնում եւ մաղի վանդակներէց և թափվում ցած: Մաղի ազատ յեզրին տողրակ են կախում, վորի մեջ և թափվում եւ հաճարի սերմը:

Այդպիսով սերմերը մաքրվում են աղբի խառնուրդներէց: Մնում եւ պարզել այդ գործողության մի քանի մանրամասնութունները: Ապարատը պետք եւ կախել կույտերից վոչ հեռու գտնվող ծառի վոչ այնքան բարձր ճյուղերի մեկից: Յեթե մտտիկ գտնվող ծառի ճյուղերը բոլորն ել շատ բարձր են, ապա պիտի մի այլ հարմարութուն ստեղծել:

Ապարատը կախում են յերեք թռկով: Այդ թռկերի մի ծայրը կապում են վերին մաղի շրջ-

Չանակին՝ յերեք կետերում. մեկ թուր կապում են մաղի բաց կողմի դիմացի թևի կենտրոնում, մյուս յերկու թուկերը—վերևի մաղի բաց կողմի անկյուններին: Այդ յերեք թուկերի մյուս ծայրերը հանգույց են սնում և հանգույցը կապում են ծառի ճյուղին կամ «կախադանին»: Թուկերից յերկուսի յերկարությունն և 160-ական սմ. և մեկը՝ 150 սմ.:

Ապարատը պիտի կախել այնպես, վոր մաղերի ազատ կողմերը մի քիչ թեքված լինեն դեպի դետինը:

Մաղելը, կամ ավելի ճիշտ թափահարելը կատարվում և հետևյալ կերպ.—

Բռնում են ապարատի մի կողմում շինված յերկու կոթերից և արագորեն շարժում ու ցնցում: Այդպիսի ցնցումներից սերմերը վերին մաղի վանդակներից վայր են թափվում դեպի ցածի մաղը, ցածի մաղում մաքրվում են մնացած աղբից և գլորվում ու ընկնում են տուրակի մեջ:

Յեթե տերևները բոլորովին չոր են, ապա վերին մաղը յերկար ցնցելու կարիք չկա. բավական և 30—40 վարկյան, վորպեսզի բոլոր սերմերը վայր թափվեն ցածի մաղը: Անհրաժեշտ և հաճախ ստուգել, թե արդյոք իզուր չի թափահարվում ապարատը, հակառակ դեպքում, յեթե վերին մաղում սերմեր այլևս չկան, իսկ թափահարելը շարունակվում և, ապա ցածի

մաղի վրա կընկնեն աղըն ու զանազան մնացորդներ և բացի դրանից, ժամանակն ել ի գուր կը վաանվի: Յերբ վերին մաղի աղբախառնուրդի մեջ այլևս սերմեր չկան, այդ մնացորդը դուրս ե ձգվում հետևյալ կերպ. արագ, մի շարժումով ապարատի յեզերքը բարձրացնում են այնպես, վոր մնացորդը հավաքվի հակառակ կողմը, հետո թեթև տախտակի, կտորով մնացորդը նրա բաց կողմով արագորեն դուրս ե շարտվում մաղից:

Կույտերը ապարատի մեջ լցնում են ֆաներկայի կամ թիթեղի լայն կտորով. կույտերից՝ յուրաքանչյուր անգամ ապարատի մեջ լցնում են և թափահարում փոքրիկ բաժիններով: Վորպես կանոն պիտի լցնել վերին մաղը մինչև 1/3-ը: Պիտի լցնել վերին մաղի փակ կողմի մոտ, վորպեսզի աղըը ցածի մաղի վրա թափվի ազատ կողմից հեռու, այլապես աղըը դեռ ցածի մաղից պետին չմաղվելով կարող ե սերմերի հետ ընկնել տոպրակի մեջ: Յերբ տոպրակի մեջ այնքան սերմ կա, վոր մաղելն արդեն անհարմար ե, անհրաժեշտ ե այդ տոպրակը վերցնել և նոր դատարկ տոպրակ կախել: Բայց նախ քան նկարագրած գործողությունը կրկնելը, անհրաժեշտ ե մաքրած սերմերը յերկրորդ անգամ մաղել, վորովհետև ամբողջ աղըը ցածի մաղից առաջին անգամ ըլլորովին չի անցնում, աղբի վորոշ մասը սերմերի հետ թափվում ե տոպրակի մեջ: Յերկրորդ անգամ մաղելուց հետո՝ սերմերն ավելի մաքուր են լինում:

Յերկրորդ անգամ մաղելու դեպքում պետք է հետևել, վոր աղբի այն մասերը, վորոնք իրենց ծավալով տակի մաղի վանդակներից վայր թափվել չեն կարող, վորքան կարելի յե քիչ քանակութեամբ յերկրորդ անգամ անցնեն վերին մաղի վանդակներից ցած: Այդ նպատակով ապարատն անհրաժեշտ է ավելի շատ թեքել դեպի բաց կողմը, քան առաջին անգամ: Բացի դրանից, արագ ու ճարպիկ շարժումով վերին մաղից աղբը թափել, հենց վոր այնտեղ սերմեր չեն նկատվում:

Սերմերն ավելի մաքուր են լինում, յեթե ծառից թափված են լինում անտառային հին փովածքից վաղորոք մաքրված տարածութեան վրա: Այդ մաքրումն անհրաժեշտ է կատարել դեռ հաճարի սերմերը ծառից ցած թափվելուց առաջ, մասավորապես ոգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբներին: Այդ աշխատանքի վրա, վոր հաճարի սերմեր հավաքելու արտադրողականութիւնը բարձրացնելու համար խոշոր նշանակութիւն ունի, մենք կանգ կառնենք ներքեվում:

Ահա յերկրորդ գործողութեան կարևոր կանոնները:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկու, նույնիսկ յերեք անգամ մաղելուց հետո այնուամենայնիվ գեռ սերմի հետ բավականաչափ աղբ է մնում, ընդհանուր քաշի մոտ 10—15% -ի չափով: Յեվ վորպեսզի սերմը վերջ-

նականապէս այդ աղբիցն ել մաքրվի, անհրա-
ժեշտ և մաղել տեսակավորող քամհարի միջոցով:

Տեսակավորող քամհարն աշխատեցնելու ձևը
հայտնի յե յուրաքանչյուր հողավորի, ուստի
սերմեր մաքրելու այդ յերրորդ ձևը լացատրե-
լու կարիք չկա:

Տեսակավորող քամհարը սլիտի լինի ընդուն-
ման բոլոր կետերում: Հավաքողն ինքն և քամ-
հարում իր բերած սերմը և ստանում և այն
սերմի գլինը, վոր ստացվում և քամհարով մաք-
րելուց հետո:

Յեթե վորեւի սլաածառով ընդունման կե-
տերում տեսակավորող քամհար չկա, այդ դեպ-
քում կարելի յե առաջարկել հետեյալ ձևը:

Մկզբից սերմերն աղբի հետ լավ չորացնում
են. դա կարելի յե անել յերկու ձևով: Տաք, արե-
վոտ յեղանակին անտառում կամ բակում հարթ,
մաքուր, բոլորովին չոր գեանի վրա բարակ շեր-
տով սերմերը փռում են այնպէս, վոր սերմե-
րը մեկը-մյուսի վրա չընկնեն: Մի քանի ժամից
հետո սերմերը շուռ են տալիս և թողնում են
դարձյալ մի քանի ժամ: Թողնել սերմերն այդ
դրութեամբ մինչև յերեկո կամ գիշերը՝ աննպա-
տակահարմար և, վորովհետև ինչպէս մանր աղբը,
նույնպէս և սերմերը յերեկոյան և գիշերը խո-
նավանում են:

Յեթե հնարավոր չե սերմերը չորացնել արևի
տակ, կարելի յե չորացնել սենյակում. այդ դեպ-

քում սենյակը պետք է լինի չոր և հատակը տախտակից: Սերմերը սենյակում փռում են բարակ շերտով աֆսպես, վոր ըստ հնարավորութեան սերմերի արանքներից հատակը յերևա:

Այդ դեպքում անհրաժեշտ է սերմերը շուտ ալ որը յերկու անգամ, տեղափոխելով մի տեղից մյուս տեղ, վորպեսզի սերմերից խոնավացած հատակը չորանա:

Բախում կամ անտառում արևի տակ սերմերը չորացնելու դեպքում բավական է մեկ որ, իսկ սենյակում՝ առնվազն յերկու որ:

Սերմերը չորացնելուց հետո պիտի վարվել հետևյալ կերպ. թիթեղից կամ թերթավոր թեթե յերկաթից պատրաստում են յերկարավուն փոքրիկ մաղ, վորի յերկարութունը պիտի լինի 50 սմ., լայնութունը 30 սմ., յեզերները 15 սմ. մաղի հատակը պիտի ունենա 6 սմ. յերկարութուն և 6 միլիմետր լայնութեան վանդակներ:

Այդ մաղն աշխատեցնում են հետևյալ կերպ.—հավաքողը նստած՝ մաղը ցածրի յերկու կողմից պահում է աֆսպես, վոր մաղի ցածր ձախ յեզրը ցածի աջ յեզրից 10—15 սմ. բարձրը լինի: Աջ ձեռքով հենվելով աջ ծնկանը դեպի վեր կատարում է կարճ, կարուկ ցնցումներ դեպի վեր: Մի քանի ցնցումներից հետո սերմերը հավաքվում են մաղի վերին մասում, իսկ ազբը ցածի: Դա այդպես է լինում աֆս պատճառով, վոր սերմերը աղբից ավելի ծանր լինելով, ցնցումներից ավելի վեր են բարձրանում, քան ազբը. այդպիսով սերմերը բաժանվում են աղբից:

Հետո աղբը բոսով հավաքում են ու մաղից դուրս ձդում: Այդ ամբողջ գործողութիւնը մեզ հանրածանոթ մաղով աղուն անելն է, վոր ներկա դեպքում կիրառւում է հաճարի սերմերն աղբից մաքրելու համար:

Մաղում այդ աղունը կատարւում է մի քանի անգամ՝ սերմերը բարձրովին մաքրելու համար: Մաղի մեջ լցնում են $1\frac{1}{2}$ —2 կիլոգրամ և զատված սերմերն ամօրձանաբար հավաքում են, վորպէսզի նրանք չդժվարացնեն յերկրորդ ու յերրորդ անգամ աղունը: Այդ ձևով 30—40 բուպեյում կարելի յէ մաքրել 16 կիլոգրամից վոչ պակաս սերմ:

Պիտի չորացնել նաև այն սերմերը, վորոնք վերջնականապէս մաքրւում են անսակավորող քամհարով:

Սերմերն առանց չորացնելու անթուլյատելի յէ պահել. վոչ մի դեպքում սերմերն առանց չորացնելու 4 ուրից ավելի չի կարելի պահել, հակառակ դեպքում՝ նրանք կփչանան: Յեթե փչանալն արտաքին նշաններ չունի, այնուամենայնիվ սերմի յուղատու հատկութիւնները պակասում են:

Ահա, հաճարի սերմեր հավաքելու այն ձևը, վոր կարող է փոխարինել «հատիկներով» հավաքելու պրիմիտիվ ձևին: Փորձը ցույց է տվել, վոր այդպիսի մեքենայացումը հեշտ է կիրառել:

Բնական է, վոր մաղերի և այս ամբողջ մեթոդի կիրառումը հավաքողին ավելի բարձր տնտեսական եֆֆեկտ ու նյութական ռդուտ կտան: Մինչև անգամ միջին բերքի ժամանակ, նույնիսկ դե-

տինը նախորդը չմաքրելու դեպքում, մեկ հավաքողին որական ընկնում ե 49 կիլոգրամ, իսկ գետինը նախորդը մաքրելու դեպքում—յերկու անգամ ավելի: Մինչդեռ հին ձևով ճատիկներով» հավաքելու դեպքում, ինչպես վերն ասվեց, մեկ հավաքողը որական հավաքում ե 3 կիլոգրամ:

Նկատի ունենալով, վոր մեկ տոնն հաճարի սերմ հավաքելու համար վճարվում ե 350 ո., այս նոր ձևով հավաքելիս՝ հավաքողին որական հասնում ե 16 ո., իսկ հին ձևով հավաքելիս, նույն հավաքողը կարող եր վաստակել մեկ ուրբուց մի քիչ ավելի միայն:

Ինքն ըստինքյան պարզ ե, վոր մեր առաջարկած ձևը, հաճարի սերմեր հավաքելու արտադրողականության բարձրացման խնդիրը վերջնականապես չի լուծում: Ընդհակառակն՝ այս դեպի իսկական մեխանիկացիան տանող ճանապարհի առաջին քայլն ե միայն: Հաշվի առնելով հաճարի սերմեր հավաքելու աշխատանքը կատարելագործված ձևերով կատարելու ամբողջ շահավետությունը, հաճարի անտառների շրջանի բնակչությունը, վոր լավ գիտե թե իր անտառների հատկությունները և թե սերմեր հավաքելու պայմանները, պիտի ինքը շահագրգռված լինի կատարելագործել հավաքելու ձևերը և հնարի ու ստեղծի նոր ձևեր ու միջոցներ:

Բոլոր գյուտների, կատարելագործությունների և առաջարկների համար կարելի չե դիմել Յերեվան, Յենարոպոլոսովոչի Յերևանի բաժանմունք, Մարքսի փող. № 11, կամ Յերեվան, Հայաստանի համար, Նալբանդյան № 11:

Այդ կատարելագործությունները կքննարկ-
վին և լավագույններն ու արժեքավորները կը-
պարգևատրվեն:

Հաճարի սերմերի հավաքելը պիտի դնել
անհրաժեշտ բարձրության վրա:

Աշխատավոր մասսաները պիտի ակտիվ
կերպով ոգնեն պետութեանը ըուսական յուղերի
տրտադրութեանը, զարգացնելու համար:

Կուտնտեսականներ, կոմյերիտականներ, պի-
տներներ, ձեր ակտիվ ոգնութեանն այդ գոր-
ծում իր վճռական դերը պիտի ունենա: Կազմա-
կերպեցե՛ք բրիգադ-արտելներ, այդ աշխատանք-
ներին ներդրավե՛ք չքավոր միջակ մասսաներին:

Հաճարի սերմեր հավաքելու և մթերելու
աշխատանքները անցկացնել սոցմրցման ու հար-
վածայնութեան նշանաբանի տակ:

Հաճարի սերմեր հավաքելու պատահական
գործը դարձնել սխտեմատիկ, մասսայական աշ-
խատանք:

Կուլխոգների վարչութեանները, կուսպերա-
ցիայի ներքին տեղական ողակները, անտա-
ռարդանտեսութեանները պիտի ամեն կերպ խը-
րախուսեն մասսաների նախաձեռնութեանն այդ
գործում, կազմակերպելով լավագույն հավաքող-
ների պարզեվատումներ և այլն:

Մեր անտառային հարստութեանների ար-
ժեքավոր մթերքները պիտի լիովին ոգտագործ-
վեն սոցխախտական շինարարութեան համար:

ԼՈՁՈՒՆԳՆԵՐ

A I
4322

Կոմյերթսականներ, պիոներներ, կոլսնե-
սականներ, կազմակերպեցե՛ք հանարի սերմեր
հավաքող հարվածային բրիգադներ:

Մոբիլիզացիայի յենթարկեցե՛ք բոլոր աշ-
խատավորության ուժադրությունն այդ գործի
centրը:

Հանարի սերմերի հավաքելը պատահական
գրադմունքից պիտի դառնա մասսայական
գործ:

Մի թողե՛ք, վոր ձեր ձեռքի սակ գտնվող
հարսություններն ի գուր կորչեն:

Հանարի սերմեր հավաքելով, դուք մեծ ոգ-
նություն եք հասցնում պետությանը յե՛վ ստա-
նում եք լավ վարձատրություն, ե՛լ ավելի ուժե-
ղացնելով ձեր սնեսական դրությունը:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ
ԳՐԱԳՐԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0039266